

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ**

**4 ապրիլի 2001 թվականի N 35**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՁԵՎ ԹԻՎ-1  
ԶԲՈՍԱՇՐՋԻԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ  
ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Պետական վիճակագրության մասին" ՀՀ օրենքի 10 հոդվածի երրորդ մասի ե) կետով սահմանված դրույթով, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

հաստատել միջազգային եւ ներքին զբոսաշրջիկության մասին Ձեւ թիվ-1 զբոսաշրջիկության պետական վիճակագրական հաշվետվությունը եւ դրա լրացման մասին հրահանգը: (կցվում է)

Հաստատված է  
ՀՀ վիճակագրության  
պետական խորհրդի  
"04" ապրիլի 2001թ.  
թիվ 35 որոշմամբ

**ՀՐԱՀԱՆԳ**

**"ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ" ՁԵՎ ԹԻՎ  
1-ԶԲՈՍԱՇՐՋԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Սույն հրահանգը մշակված է "Պետական վիճակագրության մասին" ՀՀ օրենքի 10 հոդվածի "ե" կետի համաձայն եւ նպատակ ունի տալ համապատասխան մեթոդաբանական ցուցումներ միջազգային եւ ներքին զբոսաշրջիկության վերաբերյալ հաշվետվության լրացման կարգի մասին:

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Սույն հրահանգը սահմանում է միջազգային եւ ներքին զբոսաշրջիկության, հյուրանոցների աշխատանքների մասին (ծեւ թիվ 1 - զբոսաշրջիկություն եւ թիվ 1 հավելված) պետական վիճակագրական հաշվետվության լրացման կարգը:

Սույն հաշվետվությունը ներկայացնում են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ընտրանքային կարգով ընտրված հյուրանոցները եւ հյուրանոցային ծառայություն մատուցող, ինչպես նաեւ զբոսաշրջիկությամբ զբաղվող

բոլոր այն կազմակերպությունները, որոնք նախապես գրավոր տեղեկացվում են վիճակագրական մարմինների կողմից:

## II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Պահանջվող տեղեկատվությունը ՀՀ ԱՎԾ-ն անհրաժեշտ են զբոսաշրջիկական ծառայությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն ստանալու եւ այն ՀՀ վճարային հաշվեկշռի կազմման աշխատանքներում օգտագործելու համար, ինչպես նաև ընդհանրապես զբոսաշրջիկության (ներքին եւ միջազգային) ծավալների վերաբերյալ ունենալ անհրաժեշտ տեղեկատվություն:

ՀՀ ԱՎԾ կողմից պահպանվում է պահանջվող տվյալների անանունությունը:

## III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հաշվետվությունը կազմված է Ա,Բ,Գ մասերից եւ հավելվածից: Հաշվետվության Ա, Բ եւ Գ մասերը ՀՀ ԱՎԾ-ին է ներկայացվում եռամսյակային կտրվածքով, ամեն եռամսյակին հաջորդող ամսվա մինչեւ 25-ը, իսկ հաշվետվության հավելվածը տարեկան է, որը լրացվում եւ ներկայացվում է ՀՀ ԱՎԾ -ը 4-րդ եռամսյակի հաշվետվության հետ միասին մինչեւ հաջորդ տարվա հունվարի 25-ը:

Հաշվետվության Ա մասում ընդգրկվում են այն տվյալները, որոնք վերաբերվում են միջազգային զբոսաշրջիկությանն եւ այդ բնագավառում իրականացված զբոսաշրջիկական ծախսերին:

Բ մասում ընդգրկվում են այն տվյալները, որոնք վերաբերվում են ներքին զբոսաշրջիկությանն եւ այդ բնագավառում իրականացված զբոսաշրջիկական ծախսերին:

Գ մասում լրացվում են հյուրանոցների եւ հյուրանոցային հանգրվանների ֆինանսական ընդհանրացված ցուցանիշերը:

Հաշվետվության հավելվածում ներառվում են հյուրանոցների եւ հյուրանոցային հանգրվանների հիմնական ցուցանիշերը:

## IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՍՈՒՅՆ ՀՐԱՅԱՆԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ռեզիդենտ Ըստ ԱՄՀ-ի վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության ՀՀ ռեզիդենտ կհամարվի ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած կազմակերպություն (ընկերություն) կամ ՀՀ տարածքում գործող որեւէ այլ հիմնարկ, որի հիմնական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական գործունեության շրջանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

Հիմնական բնակության վայրի երկիր - սույն հրահանգի իմաստով դա այն երկիրն է, որտեղ ֆիզիկական անձը բնակվում է 1 տարուց ավել անկախ քաղաքացիությունից: Ծանապարհորդը համարվում է այն երկրի քաղաքացին (մշտական բնակության վայրի երկիր), որ երկրի կառավարությունը նրան տվել է անձնագիր (կամ անձը հաստատող որեւէ փաստաթուղթ):

Զբոսաշրջիկների տեղավորման միջոցներ (կացարաններ) - դասակարգվում են երկու տեսակի՝ կոլեկտիվ եւ անհատական:

Կոլեկտիվ տեղավորման միջոցները ստորաբաժանվում են երեք կարգի, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են առանձին խմբերի.

1. հյուրանոցներ եւ նմանատիպ հաստատություններ.

- Հյուրանոցներ(հյուրանոցներ, բնակարանային տիպի հյուրանոցներ, մոթելներ, ճանապարհային եւ լողափնյա հյուրանոցներ, որոնք մատուցում են հյուրանոցային համակցված ծառայություններ),

- Նմանատիպ հաստատություններ (դրանք ներառում են պանսիոնատները, տուրիստական հանրակացարանները եւ նմանատիպ այլ հաստատություններ, որոնք մատուցում են սահմանափակ հյուրանոցային ծառայություններ)

2. մասնագիտացված հաստատություններ.

- առողջարանային հաստատություն (բուժման կամ հանգստի համար հաստատություն)
- աշխատանքի եւ հանգստի ճամբարներ (խմբովին ապրելու ժամանակավոր կացարաններ, որոնք նախատեսված են այն անձանց համար, որոնք հանգստի ժամանակ միաժամանակ իրականացնում են որեւիցէ գործունեություն)
- տրանսպորտի հասարակական միջոցներ (տրանսպորտային միջոցներ՝ վագոններ, նավեր, որոնք հարմարեցված են որպէս ժամանակավոր կացարան)
- կոնգրես կենտրոններ (հաստատություններ, որոնք հարմարեցված են ինչպէս գիտաժողովների, կոնգրեսների անցկացման համար, այնպէս էլ դրանց մասնակիցների գիշերելու համար)

3. այլ կոլեկտիվ տեղավորման հաստատություններ.

- բնակելի շինություններ նախատեսված հանգստի համար,
- տարածքներ նախատեսված քենպինգների համար,
- այլ կոլեկտիվ հաստատություններ:

Անհատական տեղավորման միջոցները դասակարգվում են հետեւյալ խմբերի.

- սեփական տներ,
- սենյակներ վարձակալած սեփական տներում,
- մասնավոր անձանցից կամ գործակալություններից վարձակալված բնակելի տարածք,

- այլ:

Ջրոսաշրջիկ (ճանապարհորդ) Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության մեթոդաբանության (ԶՅԿ) "զբոսաշրջիկ (ճանապարհորդ)" է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ եւ ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղեւորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

Այս առումով անհրաժեշտ է իրարից տարբերակել ճանապարհորդների երկու մեծ խմբեր՝ "այցելուներ" եւ "այլ ճանապարհորդներ": Բոլոր տիպի ճանապարհորդները, որոնք զբաղվում են զբոսաշրջիկությամբ համարվում են "այցելուներ": Այդ կապակցությամբ "այցելուներ" տերմինը իրենից ներկայացնում է ամբողջ զբոսաշրջիկության վիճակագրության համակարգի հիմնական բաղադրիչը: Իր հերթին "այցելուները" բաժանվում են երկու խմբի՝ "զբոսաշրջիկներ" (գիշերող այցելուներ) եւ "մեկօրյա այցելուներ": Այլ ճանապարհորդները համաձայն զբոսաշրջիկության վիճակագրության մեթոդաբանության սույն հաշվետվության իմաստով հաշվառման ենթակա չեն (տես 1.4. եւ 2.2. կետերը):

Ցանկացած երկրի համար զբոսաշրջիկությունը դասակարգվում է 2 խմբի.

1. Միջազգային զբոսաշրջիկություն
2. Ներքին զբոսաշրջիկություն

1.1. Միջազգային զբոսաշրջիկությունը ընդգրկում է այն զբոսաշրջիկներին, որոնք մեկնում են իրենց երկրից (հիմնական բնակության վայրի երկրից) մեկ այլ երկիր (արտագնա զբոսաշրջիկություն), կամ ժամանում են մեկ այլ երկրից (ներգնա զբոսաշրջիկություն):

Միջազգային զբոսաշրջիկության վիճակագրության բնորոշման հիմնական առանցքային չափանիշը համարվում է հիմնական բնակության վայրի երկիր հասկացությունը: Միջազգային զբոսաշրջիկության դասակարգումն ըստ երկրների իրականացման համար հիմնական, որպէս այցելուի ծագման երկրի հիմնական չափանիշ օգտագործվում է բնակության վայրը, այլ ոչ թե քաղաքացիությունը:

1.2 Միջազգային զբոսաշրջիկության վիճակագրության տեսակետով եթե անձն անընդմեջ՝ 1 տարուց ավել ապրել եւ աշխատել է մեկ այլ երկրում, որն իր մշտական բնակության վայրի երկիրը չէ, դառնում է տվյալ երկրի ռեզիդենտը եւ նրա հետագա այցելությունը մշտական բնակության վայրի երկիր առնչվում է միջազգային զբոսաշրջիկությանը:

1.3. Միջազգային զբոսաշրջիկությունը իր մեջ ներառում է հետևյալ խումբ զբոսաշրջիկները.

- Ջբոսաշրջիկներ (գիշերող այցելուներ): Այցելուներ, որոնք առնվազն մեկ գիշեր անց են կացնում ժամանած երկրի կոլեկտիվ կամ անհատական տեղավորման միջոցներում.

- Մեկօրյա այցելուներ: Այցելուներ, որոնք ժամանման երկրի կոլեկտիվ կամ անհատական տեղավորման միջոցներում չեն գիշերում:

1.4 Հետևյալ խմբի այցելուները չեն ներառվելու միջազգային զբոսաշրջիկության ժամանողների կամ մեկնողների խմբերում.

- որեւէ երկրից մեկնող, կամ որեւէ երկիր ժամանող միգրանտները, ներառյալ նրանց խնամակալության տակ գտնվողները.

- այն անձինք, որոնք հայտնի են որպես սահմանային աշխատողներ (ապրում են մի երկրի պետական սահմանին մոտ, իսկ աշխատում են սահմանային մյուս երկրում).

- դեսպանատների եւ հյուպատոսությունների աշխատողները, զինվորականները, որոնք ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, իրենց երկրից տեղափոխվում են մեկ այլ երկիր կամ հակառակը.

- այն անձինք, որոնք ճանապարհորդում(տեղաշարժվում) են փախստականի կարգավիճակով.

- տարանցիկ ուղեւորները, որոնք ֆորմալ առումով անձնագրային հսկողության կետերով չեն ժամանում տվյալ երկիր:

2. Ներքին զբոսաշրջիկությանն - առնչվում են այն զբոսաշրջիկները, որոնք ճանապարհորդում են իրենց իսկ երկրի (հիմնական բնակության վայրի) սահմաններում: Այն նույնպես բաժանվում են երկու խմբի՝ "զբոսաշրջիկներ" (գիշերող այցելուներ) եւ "մեկօրյա այցելուներ":

2.1. Ներքին զբոսաշրջիկությունը իր մեջ ներառում է հետևյալ խումբ զբոսաշրջիկները.

- Ջբոսաշրջիկներ (գիշերող այցելուներ): Այցելուներ, որոնք առնվազն մեկ գիշեր անց են կացնում ժամանած տարածքի կոլեկտիվ կամ անհատական տեղավորման միջոցներում,

- Մեկօրյա այցելուներ: Այցելուներ, որոնք ժամանման տարածքի կոլեկտիվ կամ անհատական տեղավորման միջոցներում չեն գիշերում:

2.2. Հետևյալ խմբի այցելուները չեն ներառվելու ներքին զբոսաշրջիկության ժամանողների կամ մեկնողների խմբերում.

- այն բնակիչները, որոնք մեկնում են ՀՀ այլ տարածք այնտեղ բնակության հաստատման համար,

- այն անձինք, որոնք մեկնել են այլ տարածք աշխատանքային գործունեությունն իրականացնելու համար, եւ ծախսերը վճարվել է տվյալ աշխատանքից ստացված վարձատրությունից,

- այն անձինք, որոնք կանոնավոր կամ հաճախակի ճանապարհորդում են այլ վայր աշխատելու կամ սովորելու նպատակով,

- մշտական բնակության վայր չունեցող անձինք,

- զինվորականները զինավարժությունների ընթացքում:

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

### ԲԱԺԻՆ Ա - ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋԲՈՍԱՇՐՋԻԿՈՒԹՅՈՒՆ:

Ա1 - Ջբոսաշրջիկների թվաքանակն ըստ նպատակի:

Հաշվետվության այս մասը լրացնում են ՀՀ տարածքում գործող բոլոր հյուրանոցները, մոթելները եւ հյուրանոցային ծառայություն մատուցող բոլոր այն կազմակերպությունները, անհատ ձեռներեցները, ֆիզիկական անձինք, որոնք ընդունում են տեղավորում են այլ երկրներից ժամանած ճանապարհորդներին (այցելածներ մասուն), ինչպես նաեւ բոլոր այն զբոսաշրջիկական ծառայություն մատուցող

կազմակերպությունները, որոնք զբոսաշրջիկական խմբերով կամ անհատական կարգով կազմակերպել են ՀՀ ռեզիդենտների մեկնումը այլ երկրներ:

Ա1 բաժնի 1-6 սյունակներում լրացվում է զբոսաշրջիկների ժամանման երկիրը, որ երկրից են ժամանել, իսկ 7-12 սյունակներում, թե որ երկիր են մեկնել ՀՀ ռեզիդենտները: Ընդ որում 2-6 եւ 8-12 սյունակներում նշվում է ժամանման (մեկնման) նպատակը`

- գործնական (սարքավորումների տեղակայում, պայմանագրերի կնքում, խորհրդակցությունների, կոնգրեսների, ցուցահանդեսների, տոնավաճառների, դասախոսությունների, սպորտային միջոցառումների եւ համերգների մասնակցություն, կառավարական գործուղումներ` ներառյալ դիվանագետների, զինվորական ծառայողների, բացառությամբ այն դեպքերի, երբ այցելությունը կապված է ժամանման երկրում մշտական աշխատանքի հետ),

- բուժման (այցելություն, առողջարաններ, հանգստյան տներ եւ այլ առողջապահական հաստատություններ առողջության վերականգնման նպատակով),

- կրթության (ուսուցման, վերապատրաստման կամ հատուկ մասնագիտական դասընթացների մասնակցություն),

- հանգստի կամ ժամանցի (հանգստի, տեսարժան վայրերի դիտում, մարզական, մշակութային միջոցառումների, խանութների այցելություն եւ այլն),

- այլ (հարազատների այցելություն, կրոնական միջոցառումներին մասնակցություն եւ այլն):

Ա1 բաժնի 7-րդ սյունակում նշվում է ժամանած տուրիստների ուղեւորության տեւողությունը նարդ/օրերով, իսկ 14-րդ սյունակում` մեկնածների:

## Ա2 - Ջբոսաշրջիկական ծախսեր

Միջազգային զբոսաշրջիկությունում այցելուների ծախսերը իրենցից ներկայացնում են եկամուտներ` ընդունող կողմի համար (ծառայության արտահանում) եւ ծախսեր այն երկրի համար, որտեղից զբոսաշրջիկները իրականացրել են ճանապարհորդությունը (ծառայության ներմուծում):

Ա2 բաժնում որպես այցելուների զբոսաշրջիկական ծախսեր արտացոլվելու են այն ծառայությունների դիմաց վճարումները, որոնք զբոսաշրջիկների տեղավորման միջոցները նատուցել են այցելուներին` գիշերավարձ, սնունդ, առետուր, տրանսպորտ, էքսկուրսիաներ, կենցաղսպասարկում (զբոսաշրջիկների տեղավորման միջոցների ենթակայության կետերից) եւ այլն:

Ա2 բաժնում մատուցված ծառայության չափը հաշվարկվում է գումարային-հաշվետու եռամսյակի համար (հազար դրամով):

Մեկնածներ (ծառայության ներմուծում) մասը լրացնում են այն կազմակերպությունները, որոնք կազմակերպել են ՀՀ ռեզիդենտների մեկնումը այլ երկրներ: Հաշվետվության այս բաժնում արտացոլվում են այն ծախսերը, որոնք ՀՀ ռեզիդենտները իրականացնում են ճանապարհորդությունն իրականացնելիս (զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում կատարված ծախսերը` գիշերավարձ, սնունդ) ներառյալ միազգային տրանսպորտի ծախսերը եւ այլն:

## Բաժին Բ - Ներքին զբոսաշրջիկություն

Լրացվում է հյուրանոցների, մոթելների, հանգստյան տների, առողջարանների, ճամբարների եւ այլ կազմակերպությունների կողմից:

### Բ1 - Այցելության նպատակը

Այս բաժնի 1-5 սյունակներում լրացվում են ՀՀ ռեզիդենտ զբոսաշրջիկների քանակը, որոնք հանգստի, բուժման, գործնական կամ այլ նպատակներով (24 ժամից ավել կամ 1 տարուց պակաս ժամկետով) տեղավորվել են Հայաստանի տարածքում գտնվող (ժամանման վայրի) զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում:

Հաշվետվության այս մասի նպատակն է ուսումնասիրել, թե տարվա ընթացքում ներքին զբոսաշրջիկության ինչպիսի տեղաշարժեր են կատարվում երկրի սահմաններում:

## Բ2 - Ջրոսաշրջիկական ծախսեր

Հաշվետվության այս մասը ներառում է այն ծախսերը, որոնք կատարում են ՀՀ ռեզիդենտները, ճանապարհորդելով մեր իսկ երկրում, այսինքն՝ եթե հանգստանալու, ժամանցի կամ բուժվելու են ժամանել, ապա նրանց ծախսերը գիշերավարձի, սննդի, տրանսպորտի եւ այլնի համար, որոնք առնչվում են ճանապարհորդության հետ:

### Բաժին Գ. Ֆինանսական ընդհանրացված ցուցանիշերը

101 տողում բերվում են հյուրանոցային գործունեությունից (համարների տրամադրումից) եւ հյուրանոցային տնտեսության կողմից մատուցվող այլ ծառայություններից ստացված ընդհանուր հասույթը, որից 102 տողով առանձնացվում է ավելացված արժեքի հարկը: 103 տողում բերվում է հյուրանոցային գործունեությունից (համարների տրամադրումից) ստացված հասույթը: Այն ներառում է ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր (անհրաժեշտության դեպքում համարներում ավելացած մահճակալների) տեղերի օգտագործումից ստացված գումարը, որը հաշվարկվում է փաստացի հատկացված համար-օրերի կամ մահճակալ-օրերի քանակով՝ վճարման հաշիվների հիման վրա:

105 եւ 107 տողերով առանձնացվում են ոչ հյուրանոցային օգտագործման նպատակով վարձակալությամբ տրված համարների եւ տարածքների դիմաց ստացված հասույթները (եկամուտները):

109 տողում բերվում են այլ վճարովի ծառայությունների դիմաց ստացված հասույթները, որից 110-112 տողերով առանձնացվում են հյուրանոցային տնտեսությունում գործող ռեստորանների եւ բարերի, առետրի կետերի գործունեությունից, բուժական-առողջարարական ծառայությունների մատուցումից ստացված հասույթները: Բացի վերոնշյալներից այլ ծառայությունների անվանացանկի մեջ նտնում են նաեւ հետեւյալները.

- բիզնես կենտրոնը,
- թանկարժեք իրերի, դրամի, փաստաթղթերի պահասենյակը,
- տրանսպորտի բոլոր տեսակների տրամադրումը, տաքսիների կանչը,
- տեսարանային միջոցառումների տոմսերի ձեռք բերումը, էքսկուրսիաների

կազմակերպումը եւ այլն,

- այլ վճարովի ծառայությունները (լվացքատուն, վարսավիրանոց, առօրյա կուլտուր-կենցաղային եւ տնտեսական իրերի օգտագործում եւ այլն):

Թվարկված ծառայությունների առկայության մասին նշումներ կատարվում են Ձեւ-1 զբոսաշրջիկ հաշվետվության թիվ 1 տարեկան հավելվածում:

113 տողում բերված է այլ գործառնություններից ստացված հասույթը, օր. դուրս գրված գույքի իրացումից ստացվածը:

Հասույթների մասում առանձին տողերով առանձնացվում են ՀՀ ոչ ռեզիդենտներից ստացվածները:

115 տողում ցույց է տրվում հյուրանոցի շահագործման բոլոր ծախսերը:

Դրանցից 116 տողում առանձնացվում են նյութական ծախսերը (առանց ամորտիզացիոն հատկացումների): Նյութական ծախսերը ներառում են ձեռք բերվող հումքի եւ նյութերի արժեքները, որոնք մտնում են ստացվող արտադրանքի մեջ կամ հանդիսանում է պատրաստի արտադրանքի անհրաժեշտ բաղադրիչը (աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում):

Դրանք են.

արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ստեղծման նպատակով օգտագործված նյութերի ձեռք բերման,

տեխնոլոգիական նպատակների համար օգտագործված բոլոր տեսակի վառելիքների ձեռք բերման,

օգտագործված բոլոր տեսակների էներգիաների (էլեկտրական, ջերմային, սեղմված գազի եւ այլն),  
շենքի ջեռուցման,  
արտադրությանը սպասարկող տրանսպորտային միջոցների շահագործման եւ այլ ծախսերը:

Տող 117-ում բերվում է ոչ նյութական ծառայությունների դիմաց հյուրանոցային տնտեսությունների կողմից կատարած վճարների գումարը, որի մեջ ներառվում են կապի, ուղեւորատար տրանսպորտի, տեղեկատվական-հաշվողական սպասարկման, բանկային գործառնությունների, արտագերատեսչական պահպանության, գովազդային, աուդիտորական, կոնսուլտ ծառայությունների դիմաց կատարած եւ այլ վճարներ:

Գործուղման ծախսերը (տող 118) դրանք հյուրանոցի հաստիքացուցակում ընդգրկված աշխատողների աշխատանքի մշտական վայրից դուրս որոշակի ժամկետով այլ վայրում հանձնարարություն կատարելու համար տրվող վճարներն են:

Աշխատավարձ եւ դրանց հավասարեցված այլ վճարումները (տող 119) ներառում են ինչպես հիմնական, այնպես էլ պայմանագրային աշխատողների կողմից փաստացի կատարված աշխատանքների դիմաց հաշվարկված աշխատավարձը (ներառյալ խթանող եւ փոխհատուցող վճարներ: Խթանող վճարներն են համարվում մասնավորապես տարվա աշխատանքի արդյունքների համար պարգևատրումը, երկարամյա ծառայության համար տրվող միանվագ պարգևատրումները եւ այլն: Փոխհատուցող վճարներն գիշերային, արտաժամյա աշխատանքի, հանգստյան եւ տոն օրերին, բազմաժամյա ռեժիմով աշխատանքի համար սահմանված հավելավճարներն ու լրավճարներն են): Աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված վճարումների մեջ են ներառվում նաեւ հերթական (ամենամյա) եւ լրացուցիչ արձակուրդների վարձատրությունները (չօգտագործված արձակուրդի համար փոխհատուցում):

Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները (տող 120) դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եւ չափերով աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից սոցիալական ապահովագրության համար վճարումներն են:

Հյուրանոցային տնտեսության հիմնական ֆոնդերի ամորտիզացիոն հատկացումները բերվում են տող 121-ում:

Կապիտալ վերանորոգման նպատակով կատարված ծախսերը բերվում են տող 122-ում:

Այլ ծախսերը տողում (տող 123) ցույց են տրվում հյուրանոցային գործունեության հետ կապված վերը չթվարկված ծախսերը:

Տող 124-ում բերվում է ներդրումների գումարը, որի մեջ ներառվում են դրամական միջոցները, բանկային նպատակային ներդրումներ, փայերը, բաժնետոմսերը եւ այլ արժեթղթեր, տեխնոլոգիաներ, մեքենաներ, սարքավորումներ, արտոնագրեր, վարկեր, ցանկացած այլ գույք կամ գույքային իրավունք, ինտելեկտուալ արժեքներ, որոնք ներդրվում են շահույթ կամ սոցիալական անհրաժեշտ արդյունք ստանալու նպատակով:

Ֆինանսական ներդրումների աղբյուր հանդիսանում են.

- սեփական ֆինանսական միջոցները (շահույթ, հիմնական միջոցների ամբողջական վերականգնման ամորտիզացիան, ապահովագրական մարմինների կողմից վճարված միջոցները եւ այլն),

- բանկային վարկեր, այլ կազմակերպությունների փոխառության միջոցներ, բոլոր մակարդակների բյուջետային միջոցները, արտաբյուջետային միջոցներ եւ այլն:

#### Բաժին Դ. Հյուրանոցների հիմնական ցուցանիշերը (տարեկան հավելված)

Հավելվածը լրացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե երկու կամ մի քանի հյուրանոցներ միավորված են մեկ հյուրանոցային համակարգի մեջ, ապա 1-գրոսաշրջիկ հաշվետվության հավելվածը (տարեկան) լրացվում է յուրաքանչյուրի համար առանձին:

"Հարկայնությունը" տողում (201) բերվում է հյուրանոցի հարկերի քանակը, չհաշվառած նկուղահարկը եւ որպես բնակատարածք չօգտագործվող ձեղնահարկը:

"Ընդհանուր մակերեսը" տողը (203) հաշվարկվում է որպես բոլոր համարների

(սենյակների) ընդհանուր մակերեսի եւ օժանդակ մակերեսի (խոհանոց, լոգարան, զուգարան, պահասենյակ, ճաշարան, կենցաղային սենյակ, միջանցք, նախասրահ, սրահ, հանդերձարան, հյուրասենյակ, աղմիհիստրատորի սենյակ եւ այլն) գումար՝ ներառյալ կից կառուցված շինությունների մակերեսը, որոնք ունեն մշտական ջեռուցում եւ պիտանի են բնակության համար: Հաշվառվում են նաեւ տաքացվող եւ բնակության համար պիտանի ձեղնահարկերը եւ կիսավերնահարկերը:

Ընդհանուր մակերեսի մեջ չեն մտնում.

- աստիճանավանդակների, նախամուտքերի, նախասենյակների, ամառային պատշգամբների մակերեսները,
- տաքացնող վառարաններով եւ դուրս ընկած կոնստրուկտիվ մասերով զբաղեցված մակերեսները,
- չտաքացվող ծածկապատշգամբների, ձեղնահարկերի եւ կիսավերնահարկերի մակերեսները:

Ընդհանուր մակերեսից առանձնացվում է (տող 204) վարձակալությամբ տրված տարածքը, որից (տող 205)՝ ՀՀ ոչ ռեզիդենտներին տրվածը:

"Հյուրանոցի զբաղվածությունը հաշվետու ժամանակահատվածում" տողերում (206, 207) բերվում են փաստացի օգտագործված համար-օրերի եւ տեղ-օրերի թվերը: Այն արտահայտվում է փաստացի օգտագործված ժամանակավոր եւ մշտական տեղերի թվով, ներառյալ ամրագրված համարների տեղերի թիվը եւ հաշվարկվում է հյուրերի հաշվառման մատյանների հիման վրա:

"Միաժամանակյա տարողությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում" տողում (210) բերվում է հյուրանոցում եղած տեղերի ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածի վերջում, որը որոշվում է բոլոր համարներում մշտական տեղադրված մահճակալ-տեղերի թվով:

Այս ցուցանիշում ցույց չեն տրվում.

- ժամանակավոր (լրացուցիչ) տեղերը,
- համարներում այն տեղերը, որոնք հաշվետու ժամանակահատվածում մշտական զբաղեցված են ոչ ուղղակի նշանակությամբ, օրինակ՝ գրասենյակ, ճաշարան, բուֆետ եւ այլն,
- համարներում մշտական տեղերը, որոնք զբաղված են երկար ժամանակով եւ որոնց համար վճարումը չի կատարվում հյուրանոցում գործող սակագներով:

"Հյուրանոցային համարների բնակելի մակերեսը" տողը (211) ընդգրկում է հաճախորդների բնակության համար նախատեսված բոլոր համարների մակերեսը: Բնակելի մակերեսի մեջ չեն մտնում օժանդակ հարմարությունների մակերեսը, ինչպես նաեւ այն համարների մակերեսը, որոնք զբաղեցված են ոչ ուղղակի նշանակությամբ, օրինակ՝ գրասենյակ, ճաշարան, բուֆետ եւ այլն:

"Բոլոր համարների քանակը" տողը (212) հաշվարկվում է որպես հյուրանոցային օգտագործման համարների (տող 213) եւ ոչ հյուրանոցային օգտագործման տրված համարների (տող 218) գումար: Հյուրանոցային օգտագործման համար է հանդիսանում մեկուսացված, կահավորված եւ ժամանակավոր բնակության տրված բնակելի մակերեսը, որը կարող է բաղկացած լինել մեկ, երկու եւ ավելի սենյակներից: 213 տողից առանձնացվում են համարներն ըստ տեսակների՝ շքասենյակ (տող 214), լյուքս (տող 215), կիսալյուքս (տող 216) եւ սովորական (տող 217):

Ոչ հյուրանոցային օգտագործման համարների թվի մեջ մտնում են այն սենյակները, որոնք զբաղեցված են ոչ ուղղակի նշանակությամբ, օրինակ՝ որպես գրասենյակ:

222-229 տողերում նշվում է հյուրանոցի ծառայությունների առկայությունը (առկայության դեպքում համապատասխան տողի դիմաց դրվում է "1"): Դրանք են՝ տրանսպորտային ծառայություն (տող 222), բիզնես կենտրոն (տող 223, ներառում է արբանյակային հեռախոսային կապ, ֆաքսիմիլային կապ, էլեկտրոնային փոստ, ինտերնետ, պատճենահանում, համակարգչային ծառայություն, միջոցառումների սրահ եւ այլն), առեւտուր (տող 224), թանկարժեք իրերի, դրամի, փաստաթղթերի պահասենյակ (տող 225), բուժական-առողջարարական կենտրոն (տող 226) եւ զվարճանքի (ժամանցի) սրահներ (տող 227), բարեր եւ ռեստորաններ (տող 228) եւ այլն (տող 229):

Տող 231-ում բերվում է հիմնական միջոցների միջին տարեկան հաշվեկշռային արժեքը, որը որոշվում է հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ՝ արժեքի կեսի, հաջորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ արժեքի կեսի եւ հաշվետու տարվա մնացած ամիսների առաջին օրվա դրությամբ հիմնական միջոցների գումարը բաժանած 12-ի:

Հյուրանոցային տնտեսությունում աշխատողների տարեկան միջին ցուցակային թվաքանակը հաշվարկվում է հաշվետու տարվա բոլոր ամիսների աշխատողների միջին ամսական ցուցակային թվաքանակների հանրագումարը 12-ի բաժանելով: